

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվանը
6 ռուբլի:
Առանձին համարները ԱՄՆՆ Տեղ 5 40Գ.
Թիֆլիսում գրվում են լուսագրութեան մէջ:
Մեր հասցեն՝ Тифлисъ, редакция «Мшакъ»
Базарная ул. д. Тамашева № 16.
Կամ Тифлисъ, Редакция «Мшакъ».
Տէլէֆօն № 253.

ՄԱՍԻՆ

Հ Ի Մ Ն Ա Յ Ի Դ Գ Ի Դ Ո Ր Ա Ր Դ Ր Ո Ւ Ն Ի

Խմբագրութիւնը ըստ է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և առիօրներէն):
Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզով
Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ:
Տէլէֆօն № 253.

ՄԱՍԻՆ

(37-րդ ՏԱՐԻ)

Հասցեն՝ ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».
Կովկասից դուրս գտնվող անձերի և
բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում
Дом Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д.
Сытова, և նրա բաժանմունքներում՝ Պետեր-
բուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝
Маршалковская, 130, Պարիզում՝ 8 Площадь
Биржи.

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Երեքշաբթի, մարտի 10-ին

Ընտանեկան Երեկոյք

Երեկոյթին կը նուագեն սաղաղաբանները:
Հիւրերը թոյլատրվում են համաձայն ընդ-
հանուր հիմունքներին:
202 1—1

ՊԱՏԱՐԻՆԵՐ

(ОБОИ)

ԵՐԲ. ՏԱՐԵՇՈՒՄԻ

Փաբիկայի

Գտնվում է Կայսրութեան բոլոր
մեծ քաղաքներում:
Բաժանմունքը Թիֆլիսում — Գոլովին-
սկի պր., 21, Արտիստ. Ընկ. շինութ.
Գնորդ ֆարերկային են:
(Կ.) ա. 197. 25—1

ՎԵՐԱԴԱՐՈՂՆԵՐԸ

1

Վերջին շաբաթը մեզ յաճախ դի-
մուտներ են անում Թիֆլիսում գտն-
վող թիւրքաշայիւր զանազան հարցե-
րով, որոնք վերաբերում են թէ՛ բուն
վերադարձի ինչպիսիք և թէ՛ այն բար-
ւորութիւններին, որ նրանք կարող էին
մացնել իրանց տնտեսութեան մէջ
երկրի արդիւնաբերութիւնը զարգաց-
նելու նպատակով:

Մենք հաղորդում էինք այն ամենը,
ինչ կարող էինք:

Բայց միևնույն ժամանակ պարզվում
էր, թէ որպիսի մեծ և բերդաւոր
կուլտուրական գործ է սպասում թիւր-
քաշայ մտաւորականութեանը երկրի
մէջ:

Վերականգնել տնտեսութիւնը — դա
պէտք է լինի առաջին գործը: Միև-
նոյն ժամանակ բարւոյն տնտեսու-
թիւնը և մոցնել կատարելագործու-
թիւնները, որքան հնարաւոր է, — դա
պէտք է լինի զուգակից և ուղեկից
գործունէութիւնը:

Թիւրքաշայը, որ արհաւիրքներից
յետոյ թափառում էր Ռուսաստանում,
Բոլղարիայում, Եգիպտոսում, Միջերկ-
րական կղզիներում և Ամերիկայում,
վերադառնալով մայր երկրի, կարող
էր շատ նորոգութիւններ մացնել իր
տնտեսութեան մէջ և օգտաւէտ լինել
երկրին:

Եւ անշուշտ, շուտով հանդէս կը
գան բարւորութիւնների ներմուծման,
գիւղատնտեսական գիտելիքների իւ-
րացման, դպրոցների և ազգայինների
հիմնարկութեան հարցերը, երբեք հե-
թականներ:

II

Այն հարց ու փորձերից, որ մենք
արեւ ենք վերադարձող թիւրքաշայե-
րի մասին, պարզվում է, որ ամենից
բանալի և անյօժարակամ վերադար-
ձողը ամերիկացին է:

Բայց միևնույն ժամանակ ամենից
աւելի շատ աղմուկ հանողը հայրենի-
քի մասին, ամենից շատ ճառ խօսողը,
ժողովներ հրաւիրողը, միտնդներ
կազմողը, բանաձևներ մշակողը, ազգի
և երկրի ընտանեկանութիւնը ընդգծող
այդ նոյն ամերիկացին է:

Կարգավոր այն բոլորը, ինչ որ գըր-
վում էր Ամերիկայում հրատարակող
հայ թերթերի էջերում, տեղեկանալով
միտնդական ճառերից, որ ամերիկա-
շայը սարսափելի կերպով հալվում
մաշվում է պանդխտութեան մէջ և

12 ամս. 10 ռուբլ., 11 ամս. 10 ռ., 10 ամս.
9 ռ., 9 ամս. 8 ռ., 7 և 6 ամս. 6 ռ., 5
ամս. 5 ռ., 4 ամս. 4 ռ., 3 ամս. 3 ռ., 2
ամս. 2 ռ., 1 ամս. 80 կ. և առաջման
ծախք՝ 20 կ.: Ամերիկայի տարեկան 6 զոլլար,
Եւրոպայ 30 ֆրանկ, Պարսկաստան 10 ռուբլի,
Թիւրքիա 120 դրուշ: Հասցեն փոխելու համար
պէտք է ուղարկել նաև հին հասցեն և 40 կ.
համակարգում:

Հիմնարկութիւնների յայտարարութիւնները
Центральная Контора Объявлений Торгов.
Дом Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д.
Сытова, և նրա բաժանմունքներում՝ Պետեր-
բուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝
Маршалковская, 130, Պարիզում՝ 8 Площадь
Биржи.

որ նա անձկութեամբ սպասում է այն
օրին, երբ կը բացվին հայրենիքի դուռ-
ները նրան ներս ընդունելու, կարելի
էր կարծել, թէ օսմանեան սահմանա-
դրութիւնը յայտարարելուց յետոյ ա-
մերիկացիները կը շտապէ վերադառնալ
վէպի այն իր կոչած «Երբեք» վայ-
րերը, որտեղ նա թողել է իր սիրելի-
ներին և որտեղ նա մտադիր էր զբաղ-
վել շինարար կուլտուրական գործու-
նէութեամբ:

Բայց ոչ. իրականութիւնը ցոյց է
տալիս, որ ամերիկացիները բաւական
ստանախերտ է դէպի բացված հայրե-
նական դուռը և յամենայն դէպս չէ
շտապում և գլուխ չէ կտրում վերա-
դառնալու համար:

III

Մենք անշուշտ այն կարծիքին չենք,
որ թիւրքաշայը բնութագրւում է մը-
նայ իր օջախի մէջ և չը պէտք է
պանդխտի ուրիշ տեղեր թէ՛ աշխա-
տանք որոնելու և թէ՛ առևտրական
յարաբերութիւններ պահպանելու հա-
մար: Ոչ:

Մենք լաւ գիտենք, որ յաճախ մայր
երկրը անկարող է հանդիսանալու կա-
տարելապէս լրացնելու աշխատանքի
տնտեսութեան բիւջէն և որ պէտք է
զգացվում աշխատանքի արբիւրներ ա-
պահովելու ուրիշ տեղերում: Մենք
նոյնպէս լաւ գիտենք, որ ստեղծելով
և զարգացնելով առևտրական յարաբե-
րութիւններ՝ կարելի է մեծ դարձ տալ
հարազատ երկրի բարգաւաճմանը և,
կազմակերպելով արդիւնների շահա-
ւէտ վաճառահանում, ոչ մի տեղ տեղա-
կան արդիւնագործութիւնները:

Այո, այդ գիտենք և մենք այդ
հանգամանքների մասին չենք խօսում:
Մենք այն հակառակութեան մասին
ենք խօսում, որ նկատում ենք ամե-
րիկացի արմատի ու փրօն ճառերի
և նրա գործնական քայլերի մէջ: Մենք
այն սիրելիների մասին ենք յիշեցնում,
որոնց անուշով երգում են ամերի-
կացիները, մենք այն քաջքայլած արմ-
ատիւնեան մասին ենք ակնարկում,
որ սպասում է նորոգիչ օժանդակ
ոյժերի՝ նորից վերականգնելու համար:
Մենք երկրի այն կուլտուրական բար-
բաւաճման մասին ենք խօսում, որը
կը խլի պանդխտութիւնից այն բոլոր
ոյժերը, որոնք հարկաւոր են երկրին
և կարող են այնտեղ գործել արդիւ-
նաւէտ կերպով:

Ա. Քալանթար

ԱՄՍՏՐՈ-ՍԵՐԲԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ

Բէլգրադ, 7 մարտի

Պաշտօնական «Сербскія Новости»
լրագիրը մի տեղեկութիւն է տալի,
որով կարականապէս հերքվում են
լրագրական այն լուրերը թէ՛ սերբ հրո-
սականները իրանց գործունէութիւնը
վերականգնել են Նոյի-Բազարի անշուշտ
(Հ. Գ.)

Վիէննա, 7 մարտի

«Կոր. Բիւրօյի» Մայօնիկից ստացած
տեղեկութիւնների համաձայն, թիւր-
քաշ կառավարութիւնը թոյլատրել է
Սերբիա փոխադրել «Լիւի» նաւով
բերված ռազմավարների և զէնքերի
ֆիացորդը, նաև «Օրբիս» նաւով բե-
րված ռազմական: Իսկ «Ուարան» և ու-
րիշ նաւերի բեռները փոխադրելու
համար զբաղանապէս մերժում է ար-
ւած: (Հ. Գ.)

Բեռլին, 8 մարտի

Վոյֆը հաղորդում է «Ֆրանկֆուրտ».

Յայտ.՝ ի հեռագիրը Վիէննայից. «Մեծ
պետութիւնները ցանկութիւն յայտ-
նեցին, որ սերբական նօտային աւատ-
րօ-ռուզարական պատասխանը ներ-
կայացնելը կրկին յետաձգվի, նպա-
տակ ունենալով ժամանակ վստահել
իրար միջև բանակցութիւններ սկսե-
լու և Բէլգրադում քայքայ անելու հա-
մար: Վիէննայի կարինէտը արդէն
կատարեց այդ ցանկութիւնը: Գոյմ
Ֆորգաչը հաւանորէն պատասխանը կը
տայ Բէլգրադում միայն մարտի վեր-
ջում (նոր տօմար)»: (Հ. Գ.)

Բուդապէշտ, 8 մարտի

«Պետեթ-Լիւդը» կարծում է, որ
Գրէյի քայլին պէտք է համակրանքով
վերաբերվել, սակայն չը պէտք է տար-
վել ծայրայեղ վարդապետ յոյսերով:
Վերջնական վճիռը Ռուսաստանի ձեռ-
քում է: Եթէ Բոլշակին պնդում է,
որպէսզի Սերբիան առանց պատճա-
ռաբանութեան սկսէ յետ նահանջել,
այսպէս ուրեմն սերբական կարինէտը չի
հրաժարվի այն քայլերն անել, որպի-
սիները պահանջում է Վիէննան: Բո-
լշակին պէտք է կոնֆէրենցիայի դա-
րպարին ուրիշ ձև տայ, այսինքն
համաձայնեցնել նրան Տիտաֆիլի ա-
ռաջարկութեան հետ: Այն ազդեցու-
թիւնից, որպիսին կարող էր լինեն
գործել Ռուսաստանի վրա Ֆրանսիան
և Անգլիան, կախված կը լինի սերբիա-
կան հարցի յետագայ զարգացումը»: (Հ. Գ.)

Բուդապէշտ, 7 մարտի

Լրագիրների մեծ մասը ներկայ
գրութիւնը բնորոշում է այն մարդի,
որ խաղող յեղաշրջում կը ստացվի
միայն այն ժամանակ, երբ մեծ պե-
տութիւնների հաւաքական ճնշումը
այն ազդեցութիւնը կանէ, որպիսին
նրանք յոյս ունեն. մինչև այդ օրը
պէտք է միշտ հաւատալ, որ գրու-
թիւնը լուրջ է: (Հ. Գ.)

Վիէննա, 8 մարտի

Երէկ կայսրի մօտ տեղի ունեցաւ
դիւպլոմատական ճաշ, ուր ներկայ էին
շատ զեապաններ, ի թիւս որոնց նաև
սերբական դիւլոմատի գործակալը և
պալատական պաշտօնեաները: (Հ. Գ.)

Բուդապէշտ, 8 մարտի

Պաշտօնական լրագրում հրատարակ-
ված է մի կարգադրութիւն, որով ար-
գելվում է տեղեկութիւններ հաղորդել
լրագիրներում գործերի գրութեան,
նրանց տեղափոխութիւնների, ամբու-
թիւնների կացութեան, զէնքի և ռազ-
մամթերքների, սրանց տեղերի մասին
և այլն: (Հ. Գ.)

Բեռլին, 8 մարտի

«Փրանկ. Յայտ.»-ի բերլինեան թղ-
թակիցը, որ յարաբերութիւններ է
պահպանում լրատուեղեակ շրջանների
հետ, հաղորդում է, որ Բեռլինում եւ-
րօպական միջազգայի երկրներին չէին
հաւատում նոյն իսկ այն օրերին, երբ
ուրիշ մայրաքաղաքներում յուզված
գրութիւն և անհանգստութիւն էր տը-
րում: Գերմանիան շարունակ բանակ-
ցութիւններ էր վարում խաղաղութիւ-
նը պահպանելու համար: Գերմանիան
պատրաստ էր միւս պետութիւններին
հետ միասին ազդեցութիւն անել Բէլ-
գրադում, մինչդեռ Բոլշակին խան-
գարեց այդ քայլը, հանդէս գալով բո-
լորովին անկախ կերպով:

«Փոստիլե Յայտ.»-ը ասում է. «Սեր-
բիայի ներքին գրութիւնը այնպէս չէ,
որ յոյս լինէր թէ իրերը խաղաղ յե-
ղաշրջում կը ստանան»: (Հ. Գ.)

Վիէննա, 8 մարտի

«Կոր. Բիւրօյին» հաղորդում են
Բէլգրադից. «Լարված գրութիւնը, որի
հետ կառավարական շրջանները աւատ-
րական նոր նօտա էին սպասում, չը-
բացաւ, համարեա բոլորովին, արտա-
սահմանեան լրագիրների այն տեղեկու-
թիւնների շնորհիւ, թէ մեծ պետու-
թիւնները անբուսափելիօրէն բարեկա-
մական առաջադրութիւն են անելու

Բէլգրադում: Այն կարծիքը կայ, թէ
Սերբիան, որ շարունակ յայտնել է, թէ
սոսկ մեծ պետութիւնները իրաւասու
են լուծել աննկատի շարք, բնակա-
նաբար կենթարկվի անպայման նրանց
վճարին: Սերբիան չէ կասկածում, որ
Եւրօպական կոնֆէրենցիան կընդունէ
բօսնիական հարցի միայն այնպիսի
վճիռ, որպիսին մի կողմից կը համա-
պատասխանէ արգարութեան, միւս
կողմից կապահովէ Եւրօպական խա-
ղաղութիւնը ոչ միայն այժմ, այլ և
երկար ժամանակ: Սերբիայից բնու-
թեամբ պղկված յայտարարութիւնը
գործնական նշանակութիւն չի ունե-
նայ ոչ Աւստրո-Ունգարիայի, ոչ էլ
Եւրօպայի համար: Գործը պարփակ-
վում է հանուր Եւրօպային սպառնացող
վտանգից խուսափելու մէջ, մինչդեռ
այդպիսի վտանգ կարող է ստեղծել
բօսնիական հարցը առանց սերբական
ժողովրդի կենսական շահերը ուշա-
դրութեան առնելու կանոնադրելու
փորձը: Սերբիան, որպիսին անկեղծ
խաղաղասիրութեամբ, կը հետեւէ այն
բոլոր խորհուրդներին, որոնք համա-
պատասխանում են անկախ պետու-
թեան արժանապատուութեանը: Մեծ
պետութիւնները այդպիսի գործե-
լակերպ կազատէ Սերբիային ան-
հրաժեշտութիւնից՝ որեւէ անմիջական
բանակցութիւններ սկսել Աւստրո-Ուն-
գարիայի հետ, որպիսի հանգամանքը
կը վերացնէ խաղաղութիւնը խախտե-
լու ամենամեծ վտանգը: (Հ. Գ.)

ՎԵՐԱԴԱՐՈՂ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«ԲԵԿԵ» լրագիրը հաղորդում է, որ
Կովկասի վարչական, ինքնավարու-
թիւնների և հասարակական հաստա-
տութիւնների գործունէութիւնները
վերաբնակելու հարցը վերջնականապէս
համարվում է վճարված դրական մարդի:
Վերաբնակել է նշանակվում սենատոր
Բետաքեզկին, որը Կովկաս պիտի ու-
ղեկովի Չապիի տօններից յետոյ:

(«Baku»)

Պետերբուրգ, 7 մարտի
Երէկ Յարսիօյ-Սելօյում տեղի ու-
նեցաւ միմիտրների և հրաւիրված
անձանց խորհրդակցութիւնը մի շատ
կարևոր հարցի մասին:

Լուր է ստացված Պետական Դու-
ման արձակելու մասին: Հիկտեմբե-
րեանները վճարականապէս հերքում են
այդ բանը:
(«Baku»)

Բեռլին, 7 մարտի
Պետական կանցլէրը ընկալաւ
բիւլետային մասնաժողովի միջոցով
տեղեկացում է, որ Ֆօն-Շէնը լրագո-
րութիւն ունի հարկաւոր տեղեկու-
թիւնները տալ պատրաստակաւ նա-
ւէ կառուցանելու անգլո-գերմանա-
կան համաձայնութեան հարցի վերա-
բերելու, որքան դա համապատասխա-
նում է երկրի շահերին: Պետական
կանցլէրը իրան է վերադառնում ան-
ձամբ վերադառնալ այդ հարցին ապա-
գայում: (Հ. Գ.)

Վիէննա, 7 մարտի
Պատգամաւորների պալատ: Քննե-
լով նորակոչների օրինագիծը, բոլոր
կուսակցութիւնների հետեւորները ան-
խորհրտ հաւատ յայտնեցին, որ խաղա-
ղութիւնը կը պահպանվի Բոլոր հե-
տեւորները, բացառութեամբ սօցիալիստ-
ների, նաև չեխ-արմատականների,
յայտնեցին, որ վտանգաւոր գրութեան
պատճառով ժողովրդական ներկայա-
ցուցիչները պարտաւոր են ընդէ տալ
օրինագիծին: Չեխ պատգամաւորները
անկացնելու, որ նրանց ձայն տալը
յօգուտ օրինագիծի բնաւ չէ վերաբե-
րում նրանց օպպօզիցիօն վերաբե-
րութիւնը զէպի կառավարութիւնը: Է-
րինգօֆ և Կիսարի պատգամաւորները
յայտնեցին, որ գերմանական կու-
սակցութիւնները չափազանց դո-
նի Գերմանիայի հաւատարմութիւնից:
Կիսարին ասաց. «Մենք խաղաղութիւն
ենք ցանկանում, բայց ոչ Աւստրիայի
պատուի գնով»:

Սլաւոն Շուստերշիլը յայտնում է.
«Մենք» հարաւի պաւստները, միւս
կուսակցութիւններից աւելի, ամբողջ
սրտով ցանկանում են խաղաղութեան
պահպանումը, որովհետև մենք ստիպ-
ված ենք լինելու կուսել հենց մեր եղ-
բայրների դէմ: Այնուհետև հետեւորը
հասկացնում է սերբերին, որ նրանք
կը յաղթվեն, նրանց թերեւ կը կառա-
վարեն մաշաունները: Վերջում նա կոչ
է անում Ռուսաստանին, որ սա վերջին
բաղկին ամենաանապատելի կերպով իր
ազդեցութիւնը գործ դնէ Բէլգրադում
խաղաղութիւնը պահպանելու օգտին:

Ազգային պաշտպանութեան մինիստր
Գեօրգիւր Մուզաբեկով է այն հանգաման-
քը, որ օրինագիծը ընդունելու ևս առա-
ւել լուրջ է ներկայանում այն քաղե-
րին, երբ հանուր Եւրօպային աչքերը
ուղղված են դէպի Աւստրիան:

Միմիտրի յետագայ համագեցուցիչ
խօսքերի ազդեցութեան տակ, պալատը
289 ձայնով ընդգէմ 103-ի օրինագի-
ծը ընդունեց: (Հ. Գ.)

Պարիզ, 7 մարտի

Պատգամաւորների պալատ: Պա-
տապետները պատահաւորապէս գոր-
ծադուր լուսին ուղղված հարցապնդ-
ման, ստատոս-սեկրետարի օգնական
Սիմիանը ձախակողմեանների հաւա-
նութեամբ յայտնեց, որ եթէ կուսա-
վարութեան և հեռագրական ծառա-
յոյնների գեղեցիկ յարաբերութիւնները
խախտված են, դրա մեղքը կառավա-
րութեան վրա չէ ընկնում, այլ իր
վրա անձնապէս:

Ապա մինիստր Բարտուն ասաց.
«Հեռագրական պատմութեան գոր-
ծադուր ինքն ըստ ինքեան թոյլա-
տրել է, բայց այժման գործադուրը
սովորական գործադուրից շատ բանով
զանապաշտվում է: Պաշտօնեաները սոր
դրին յեղափոխական ճանապարհի վրա
ամբողջ ազգի դիմաց այն քաղեքին,
երբ կառավարութիւնը հրամայողական
անհրաժեշտութիւն ունէր անհրաժեշտ
յարաբերութիւններ պահպանել իր
զեապետների հետ: Այդ վարմունքը
նոյն էր, թէ հակ

Полицейская. 7.